ԱՊՐԻԼ 2023

# ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀՈՒՇԱՏԵՏՐ

ՀԱՄԱԺՈՂՈՎՆ
**ԱՅՍՏԵ՛Ղ Է**

ԺԱՄԱՆԱԿՆ Է ԶՈՐԱՑՆԵԼՈՒ ՁԵՐ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ԱՎԵԼԻ ՄՈՏԵՆԱԼՈՒ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻՆ ԵՎ ՍՏԱՆԱԼՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ:

«Ես . . . աղոթել եմ, որ այս համաժողովը բոլորիդ համար լինի հոգևոր նորոգման ժամանակ: . . . Թող այս համաժողովը ձեզ համար լինի խաղաղության և հոգևոր խնջույքի ժամանակ: Թող որ դուք փնտրեք և ստանաք անձնական հայտնություն այս նիստերի ընթացքում»:

***Նախագահ Ռասսել Մ. Նելսոն***[1]

# ՀԱՐՑՐԵ՛Ք,

> «Ձեզ տանջող հարցերի համար տրվող մաքուր հայտնությունը այս համաժողովը կդարձնի արդյունավետ և անմոռանալի»:
>
> *Նախագահ Ռասսել Մ. Նելսոն*[2]

## ԻՍԿ ՀԵՏՈ ԼՍԵ՛Ք

Այ պահին ունե՞ք որևէ հարց կամ մտահոգություն ձեր մտքում: Գուցե ձեզ անհանգստացնում է լավ ընկերներ գտնելու հարցը, որոնք կոգեշնչեն և կխրախուսեն ձեզ: Կարող եք մտածել, թե ինչպես բարելավել ձեր ինքնագնահատականը կամ հիշել ձեր աստվածային ինքնության մասին: Գուցե դուք փորձում եք որոշել, թե որ համալսարանը դիմել: Կամ դուք գուցե պարզապես անհանգստանում եք ապագայի համար, երբ աշխարհում այդքան շատ հակամարտություն և զայրույթ կա:



# Ի՞ՆՉ ԵՔ ՄՏԱԾՈՒՄ

Դուք ավելին կստանաք գերագույն համաժողովից, եթե ձեր հարցերն ու մտահոգությունները ձեր մտքում պահեք: Տերը կօգնի ձեզ գտնել պատասխաններ, եթե դուք բացեք ձեր սիրտը և լսեք Նրա ծառաներին:

Հարցեր.

Պատասխաններ.

«Աստված իսկապես կհարգի մեզանից յուրաքանչյուրին տված Իր ուխտերն ու խոստումները: Մենք չպետք է անհանգստանանք դրա մասին: . . . Մենք պետք է անենք հնարավոր ամեն բան, բայց պետք է Նրան թողնենք օրհնությունների կառավարումը՝ թե՛ նյութական և թե՛ հոգևոր»:

*Երեց Դ. Թոդ Քրիստոֆերսոն*[3]

# ՍՈՎՈՐԵԼ ԹԵՄԱՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Դուք գտե՞լ եք որևէ թեմա ձեր լսած ելույթներում: Կա՞ն թեմաներ, որոնք կարևոր են ձեզ համար այս պահին:

Թեմաներ.

Ինչ նշանակություն ունի սա ինձ համար.



**ՆՇՈՒՄՆԵ՞Ր ԿԱՏԱՐԵԼ .**

Ոչ ոք չի ասել, որ դուք պարտավոր եք գրառումներ կատարել համաժողովի ժամանակ: Փոխարենը՝ դուք կարող եք նկարել, եթե դա օգնում է ձեզ ավելի լավ ձևակերպել ձեր մտքերը: Գտեք ձեզ հարմար տարբերակը:

# ԻՄ ԶԳԱՑՄՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Այդ երկու բառով՝ «Լսիր Նրան», Աստված մեզ տալիս է հաջողության, երջանկության և ուրախության օրինակն այս կյանքում: Մենք պետք է *լսենք* Տիրոջ խոսքերը, *ականջ դնենք* դրանց և *ուշք դարձնենք* Նրան, ինչ Նա ասել է մեզ»:

*Նախագահ Ռասսել Մ. Նելսոն*[4]

## ՆԱԽԸՆՏՐԵԼԻ ԵԼՈՒՅԹ

Կա՞ ելույթ, որը լսել եք այս համաժողովի ժամանակ և ձեզ ամենաշատն է դուր եկել: Գրի առեք խոսնակի անունը, ելույթի իմաստը, և ինչու այն ձեզ շատ դուր եկավ:

# ԽՈՐՀԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿ

Համաժողովի ավարտից հետո ժամանակն է աշխատել այն բաների վրա, որոնք լսել և զգացել եք: Ահա մի քանի հարցեր, որոնք կօգնեն ձեզ սկսել.

- Ինչի՞ վրա կարող եմ կենտրոնանալ առաջ շարժվելիս:
- Կա՞ իմ կյանքում որևէ բան, որը ես պետք է փոխեմ:
- Ինչպե՞ս կարող եմ ամրապնդել ապրող մարգարեների մասին իմ վկայությունը:
- Ինչպե՞ս կարող է Փրկչի հանդեպ իմ սերը մեծանալ:
- Կա՞ն բաներ, որոնք ես կարող եմ անել, որպեսզի ավելի լավ լսեմ Նրան իմ առօրյա կյանքում:
- Ձեր ունեցած այլ հարցերը.

«Այո, մենք պետք է սովորենք անցյալից, և այո, մենք պետք է պատրաստվենք ապագայի համար: Բայց միայն *հիմա* կարող ենք դա անել: *Այժմ* է ժամանակը սովորելու: *Այժմ* է ժամանակը ապաշխարելու: *Այժմ* է ժամանակը, երբ մենք կարող ենք օրհնել ուրիշներին»:

*Նախագահ Ռասսել Մ. Նելսոն*[5]

**ԱՎԵԼԻ ՇԱՏ ՕՐԻՆԱԿՆԵՐԻ ԿԱՐԻՔ ԿԱ՞:**

Ներբեռնեք և տպեք այս հուշատետրը **conference.ChurchofJesusChrist.org**-ից:


**ՀՂՈՒՄՆԵՐ**

1. Ռասսել Մ. Նելսոն, «Քարոզել խաղաղության Ավետարանը», 2022 թվականի գերագույն համաժողով (*Լիահոնա*, մայիս 2022, 6-7):
2. Ռասսել Մ. Նելսոն, «Մաքուր ճշմարտություն, մաքուր վարդապետություն և մաքուր հայտնություն», 2021 թվականի գերագույն համաժողով (*Լիահոնա*, նոյ. 2021, 6):
3. Դ. Թոդ Քրիստոֆերսոն, 2022 թվականի ապրիլի գերագույն համաժողով (*Լիահոնա*, մայիս 2022, 78):
4. Ռասսել Մ. Նելսոն, «Լսիր Նրան», 2020 թվականի ապրիլի գերագույն համաժողով (*Ensign* կամ *Լիահոնա*, մայիս 2020, 89):
5. Ռասսել Մ. Նելսոն, «Այժմ է ժամանակը», 2022 թվականի ապրիլի գերագույն համաժողով (*Լիահոնա*, մայիս 2022, 126):



© 2023 by Intellectual Reserve, Inc. All rights reserved.

ԱՅՍ ԳՐՔՈՒՅԿԻ ՎԵՐԱՏՊՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՏՐՎՈՒՄ Է ԱՆՁՆԱԿԱՆ, ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ: ՍԱ ՆԵՐԱՌՈՒՄ Է ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ԾԽԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻՆ՝ ՏՊԵԼՈՒ ՓՈՔՐ ԹՎՈՎ ՕՐԻՆԱԿՆԵՐ ՆՐԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՒՄ ԻՐԵՆՔ ԾԱՌԱՅՈՒՄ ԵՆ ԻՐԵՆՑ ԿՈՉՈՒՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ: ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ ՊԵՏՔ Է ՏՊՎԵՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱՄԲ: ՍԱ ՉԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒՄ ԱՅԴ ՆՅՈՒԹԸ ԱՌՑԱՆՑ ՑՈՒՑԱԴՐԵԼՈՒ, ՈՒՐԻՇ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԿԱՄ ՏԱՐԱԾԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ: ԱՅՍ ՆՅՈՒԹԻ ՈՐԵՎԷ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԱՀԱՆՋՎՈՒՄ Է ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ:

**permissions.ChurchofJesusChrist.org**



ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ